ՀԻՐԵՐ.– (Հերթով վեր են կենում եւ մօտենալով ձեռ են տալիս Նազարին։) Բարով եկար, քաջ Նազար ախպեր։

Ա. ՀԻՐ.– (Սաքոյին) Այ տղա, ո՞նց էլ ճանաչեցիր Քաջ Նազարին։

ՍԱՔՈ.– Տեսա՞ք, ո՞նց լուս գցեցի Քաջ Նազարին։ Այ հա՛յ, Դաղստանից մինչի Հնդստան երկու իգիթ եմ ճանաչում. մինը Քաջ Նազարն է, մինն էլ Քաջ Նազարն ինքը կասի ով է։

Բ ՀԻՐ.– Հասկանում եմ ինչի համար եկած կլինի մեր կողմերը։ Կա ու չկա էն է։

ՁԱՅՆԵՐ.– Ինչի՞ համար։

Բ ՀԻՐ.– Յետոյ կասեմ։

ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒԿ.– Գիտե՛մ, գիտե՛մ ինչի համար է, (Աչքով է անում Նազարին) Էն որ ես ու դու գիտենք։

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ.– Ես հլա ձեն չեմ հանում, տեսնեմ դուք գլխի՞ կընկնե՞ք, թէ ով է Քաջ Նազարը։

Բ ԾԵՐՈՒՆԻ.– Քաջ Նազարին ո՞վ չի ճանաչում։ Սաղ աշխարհքը գիտի։ Քառասուն տարի է մեր սարերում ման է գալիս Քաջ Նազարը։

ՀԻՐԵՐ.– Այ ջա՛ն, այ ջա՛ն, այ ջա՛ն։

ԹԱՄԱԴԱ.– (Նազարին) Է, Նազար ախպե՞ր, մենք էսքան խօսեցինք դու սուս կացար։ Ո՞վ գիտէ մտքումդ ի՞նչ բաղեր գնացիր ու եկար։ Հիմի տեսնենք մեզ համար ի՞նչ ես բերում էդ բաղերից։ Հրամանքդ հիմի որտեղի՞ց ես գալիս։

ՆԱԶԱՐ.– (Հպարտ հազալով) Ախպորս ասեմ, ես հիմի Քաֆրըստանու միջից եմ գալիս։ Գնացել էի Բաղր խանի գլուխը կտրելու։ Կտրեցի ու եկա։ Ճամփին էլ Քեարիմ խանի գլուխը կտրեցի։

ՀԻՐԵՐ.– Վա՜հ…

ԹԱՄԱԴԱ.– Դալա՛ր կենա կուռդ։ Ժողովուրդ էլ ջարդո՞ւմ ես։

ՆԱԶԱՐ.– Ճանճի պէս, մին զարկում, հազար ջարդում։

ԹԱՄԱԴԱ.– Ասել է խաների գլուխը կտրելով ու ժողովուրդ ջարդելով ման ես գալիս։

ՆԱԶԱՐ.– Էդպէս է մեր սովորութիւնը։ Մենք էլ ուրիշ գործ չունենք։ Մեր գործը ջարդելն է։

ԹԱՄԱԴԱ.– Հիմի աստուած որ յաջողի սաղ աշխարհքը ջարդելո՞ւ ես։

ՆԱԶԱՐ.– Մտքներս էդ է։

ԹԱՄԱԴԱ.– Դալար կենա կուռդ։ Բա որ Էդպէս է մի խնդիրք պիտի անեմ։

ՆԱԶԱՐ.– Ասա, լսում եմ։